ԱԾԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Վ. Ա. ՔՈՍՅԱՆ

Ածականի կապակցությունները ներկայացնում են չափազանց հետաքրքրական պատկեր։ Դրանք ինչպես բաղադրիչների բնույթով, այնպես էլ շարահյուսական դերով միատարր չեն, իսկ դա պայմանավորված է մի կողմից ածականների ծագման ու կառուցվածքի, մյուս կողմից ածականի շարահյուսական կիրառության առանձնահատկություններով։ Ածականի բառակապակցությունների տարբեր տեսակները ձևաբանական-շարահյուսական կառուցվածքով կապվում են ածականների տարբեր իմաստների կազմության ու ֆունկցիոնալ-շարահյուսական առանձնահատկությունների հետ։ Այդ կապակցությունների մի մասն արտահայտում է ձևաբանական իմաստ (դրսևորելով համեմատության այս կամ այն աստիճանը), մի այլ խումբը համապատասխան ածականների լեքսիկական իմաստի ընդարձակման դրսևորման արդյունք է, երրորդ խումբը բխում է ածականի շարահյուսական կիրառության յուրահատկությունից։

Ածականի բառակապակցությունները դասդասել ենք՝ ելնելով լրացումների խոսքի մասային պատկանելությունից։ Ըստ այսմ էլ ածականի բառակապակցությունները բաժանում ենք ենթախմբերի՝ գոյական լրացումով, դերանուն լրացումով, մակբայ լրացումով, ածական լրացումով, թվական լրացումով, դերբայ լրացումով և այլն։ Սրանցից գոյական և դերանուն, մակբայ և դերանուն, թվական և դերանուն լրացումներով կապակցությունները իմաստային և շարահյուսական տեսակետից հարաբերակից են՝ շնորհիվ համապատասխան խոսքի մասերի հարաբերակցության։ Ուստի քննարկման ժամանակ առաջինների հետ միաժամանակ նշվում են նաև երկրորդները։

Ածականի բառակապակցությունների ուսումնասիրությունը տարվում է ելնելով նաև լրացումների շարահյուսական կառուցվածքից։ Այդ կապակցությունների մեջ լրացումը կարող է արտահայտվել կամ ինքնուրույն գործածվող խոսքի մասով, կամ կապի և կապի խնդրի միջոցով։ Հետևաբար տարբերում ենք ածականի առանց կապի լրացում ունեցող բառակապակցությունները այն կապակցություններից, որոնց լրացումը կապով է արտահայտվում։ Ածականի լրացումը կարող է լինել ինչպես մեկ բառ, այնպես էլ ամբողջական բառակապակցություն, որը երբեմն հարաբերակից է լինում նախադասություն։ Այսպիսի լրացումները երբեմն դժվար է տարբերել ինքնուրույն նախադասությունից։ Դա առանձնապես զգալի է այն դեպքերում, երբ ածականի բառակապակցությունը հանդես է գալիս որպես տրոհվող լրացում։ Այստեղ խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ ածականի լրացումն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Ածականը սակայն, կարող է ունենալ ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի լրացումներ։ Ուստի մենք տարբերակում ենք մեկ լրացումով կամ երկանդամ բառակապակցությունները մեկից ավելի լրացում ունեցող բառակապակցություններից։

Հայերենի բառակապակցությունների ուսումնասիրությունը առաջ է քաշում այնպիսի հարցեր, որոնց լուծումը խիստ անհրաժեշտ է ժամանակակից հայերենի գիտական շարահյուսության ստեղծման համար և պահանջում է մանրակրկիտ ու հանգամանալից ուսումնասիրություն այդ ասպարեզում։ Այսպես օրինակ՝ ժամանակակից հայերենի թվականի բառակապակցությունների ուսումնասիրությունը մասամբ հանգեցնում է այն եզրակացության, որ նախադասության անդամ և բառակապակցություն հասկացությունների միջև օրգանական կապ կա։ Սակայն դրանք շարահյուսական տարբեր հասկացություններ են, որոնք մի շարք դեպքերում սահմաններով համընկնում են, բայց և շատ դեպքերում տարբերվում են։ Ածականի բառակապակցությունների քննությունը նույնպես բերում է նման եզրակացության։ Այստեղ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շարահյուսական որոշ ֆունկցիաների դեպքում բառակապակցությունը համընկնում է նախադասության անդամին, իսկ այլ դեպքերում՝ ոչ։ Երբեմն նույն կապակցությունը իրրև մեկ անդամ է

հանդես գալիս, երբեմն ածականը դիտվում է որպես նախադասության ինքնուրույն անդամ, իսկ նրա հետ կապակցվող բառը՝ այլ անդամ։

Վերը շարադրված դրույթներից ելնելով էլ տրված է ածականի բառակապակցությունների նկարագրությունը։ Այս կապակցությունների առաջին տեսակը դոյական լրացումով բառակապակցություններն են։

ԴՈՅԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ածականը ունենում է տարբեր հոլովներով դրված դոյական լրացումներ, ուստի անհրաժեշտ ենք համարել առանձին-առանձին քննարկել տարբեր հոլովներով արտահայտված դոյական լրացում կապակցությունները։ Մյուս կողմից ելնելով կապակցություններում ածականի շարահյուսական տարբեր ֆունկցիաներից դոյականով կապակցությունները բաժանում ենք հետևյալ խմբերի. 1) դոյականով կապակցություններ, որոնց գլխավոր բառ ածականը նախադասության մեջ կատարում է ստորոգելիական վերադրի պաշտոն. 2) դոյականով կապակցություններ, որոնց ածական լրացյալը նախադասության մեջ կատարում է պարագայի պաշտոն. 3) դոյականով կապակցություններ, որոնց լրացյալը (անպայման լրացումներով հանդերձ) նախադասության մեջ որոշիչ է։

ԴՈՅԱԿԱՆ ԵՎ ԴԵՐԱՆՈՒՆ ԼՐԱՑՈՒՄԸ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Ածականի այս բառակապակցությունը ավելի շատ է գործածվում։ Տրական հոլովով դոյական և դերանուն լրացում են ունենում տարբեր իմաստ և ծագում ունեցող ածականներ։

Այսպես, տրականով լրացում են ունենում արժանի, արժանավոր, անարժան, հլու, վայել, անվայել, սազական, պարտական, հատուկ, ծարավ, ծարավի, տեղյակ, անտեղյակ, հավասար, անհավասար, հավատարիմ, մատչելի, անմատչելի, համապատասխան, անհամապատասխան ծանոթ, անծանոթ, հարմար, անհարմար, համեմատ, անհամեմատ, ներդաշնակ, աններդաշնակ, մտերիմ, համաձայն, խառն, մոտ, մոտիկ, ուրախ, կից (նաև՝ հասակակից, կարեկից, վիճակակից, արհեստակից, սահմանակից և այլն), կարոտ, նման, մերձավոր, պիտանի, անպիտան, անընտել, համաչափ, անհամաչափ, պատրաստ, անպատրաստ, նախանձախնդիր, վրեժխնդիր, հմուտ, սիրահար, անտարբեր, հակառակ, հայտնի, անհայտ, հարկավոր, անհրաժեշտ, ցանկալի, ատելի, լսելի, հասկանալի, անհասկանալի, պաշտելի, անբացատրելի, համակրելի, համակիր և այլն։

Տրական հոլովով դոյական կամ դերանուն լրացումով և ածականով բառակապակցություններն արտահայտում են իմաստային մի շարք հարաբերություններ։ Այսպես, պարտական, երախտապարտ, անձնվեր, մատչելի, անմատչելի և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են մատուցման հարաբերություն, ինչպես «նա աստվածային վեհանձնությամբ ոգեշնչած էր հասարակ մահկանացուներին անմատչելի այդ բարձրության վրա» (Ն. ր., հ. 2, 120)։ «Արցախանիստում դա համարվում էր ամենահետևյալ աղմատին իսկ մատչելի բան» (Ն. Ջ., Պ. Պ., 271, 1958)։

Մատուցման հարաբերությունը կարող է արտահայտվել նաև այն կապակցություններով, որտեղ ածականի լրացումը կապի հետ է դրված։ Այս ձևով լինում են՝ նրա համար անմատչելի, իմ նկատմամբ անձնվեր և այլն, ինչպես՝ «Գեներալը միանգամից մատչելի էր դարձել պատանու համար» (Հ. Ք., Մ. Տ. Ջ., հ. 1, 326)։

Խառն, կից (կարեկից, սահմանակից, հասակակից), մոտ, մոտիկ, մերձակա, մոտակա, մերձավոր, անընտել, սովոր, անսովոր, հայտնի, անհայտ, հարկավոր, անհրաժեշտ, հմուտ, սիրահար և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են հանդման հարաբերություն, ինչպես օրինակ՝ «Կողակը գործին հմուտ մարդու ժպիտով աչքերը գցեց հատակին» (Դ. Դ., Վարդ., 26)։ «Տեր Գևորգը վկայեց, որ տանուտերը խղճով մարդ է, ժողովրդին կարեկից ու հոգատար» (Բակունց, 17)։ «Նա անցավ ասիական դահլիճին կից փոքրիկ սենյակը» (Շիրվ., 2, 144)։ «Թարմ մտքերի սիրահար օրիորդներն ու պարոնները հիացած ծափահարեցին ճառախոսին» (Ն. ր., 1, 130)։ «Առանք մեզ ամենահարկավոր իրերը, և վարձելով երկու սայլ ճանապարհ ընկանք» (Վրթ. Փափ., 2, 286)։ «Թագավորն ուրախությամբ լսեց վիրաբույժի խորհուրդը և դրեց Աբաս եղբորը մեզ հայտնի նամակը» (Մուր., 3, 386)։

Պետք է նշել, որ հանդման հարաբերություն արտահայտող բառակապակցությունների գլխավոր բառ ածականը կարող է կապակցվել նույն իմաստով կապի հետ դրված բառերի հետ։

Բհարկև այդ դեպքում հնարավոր է իմաստային որոշ տարբերություն, սակայն ածականի բառակապակցությունների զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ իմաստային այդ տարբերություններ այլևս չի զգացվում, և վերջին տեսակի կապակցություններն ավելի հաճախ են գործածվում։ Այսպես, խառն, հարկավոր, անհրաժեշտ, անհայտ, հմուտ և այլ ածականներ ունենում են լրացում նաև հետ, մեջ, համար և այլ կապերով։ Օրինակներ՝ «Նրանց վրա գտնված ոսկին և արծաթն իր հատատ շատ հարկավոր էին» (Բ., 4, 396)։ «Վանեցու սեղանի երգն անգամ խառն է լինում արտասուքի հետ» (Բ., 5, 12)։ «Դնացրը կանգնել էր բոլորի համար անհայտ ու անանուն մի կայարանում» (Հ. Ք., Մ. Տ. Զ., 2, 36)։

Մտերիմ, բարեկամ, ծանոթ, անծանոթ, հակառակ և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են փոխադարձ կապի հարաբերություն, ինչպես օրինակ՝ «Հարունյանները հետաքրքրությամբ դիտում էին այդ՝ իրենց անծանոթ հարևան գեղեցկուհուն» (Ն. Դ., 2, 11)։

Փոխադարձ կապի հարաբերություններ կարող է արտահայտվել նաև ածականի՝ կապով կազմված կապակցություններով։ Այդպես են (այդ) մարդու հետ մտերիմ, բարեկամ, մեկի հետ ծանոթ, անծանոթ կապակցությունները։ Իսկ որոշ դեպքերում տարբերություն կա առանց կապի և կապով կազմվող բառակապակցությունների միջև։ Այսպես, ծանոթ, անծանոթ ածականները առանց կապի պահանջում են իրի անուն, իսկ կապով՝ անձի անուն։ Օրինակ՝ «Վարպետ Փանոսի հետ նա նախածանոթ էր երևում» (Բ., 5, 98) և «Ես այդ գործին ծանոթ եմ»։

Տեղյակ, անտեղյակ, անտարբեր ածականներով կազմված կապակցությունները տրականով արտահայտում են վերաբերության հարաբերություն։

«Նա խոսեց և դրանց խաղի մասին գործին տեղյակ մարդու հանձնապաստանությամբ» (Ն. Դ., 2, 24)։

Ու հավիտյան էլ մնացին քնած,
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր (Հ. Թ., 2, 143)։

Վերաբերություն հարաբերությունն արտահայտվում է նաև բացառականով կազմված բառակապակցությունների մեջ, օրինակ՝ գործին անտեղյակ և գործից տեղյակ։

Նման, հավասար, հարմար, անհարմար, համապատասխան, անհամապատասխան, համեմատ, ներդաշնակ, համաչափ, անհամաչափ և այլ ածականներով կազմված բառակապակցություններն արտահայտում են նմանության, համապատասխանության հարաբերություն, ինչպես օրինակ՝ «Դուք ուրեմն կնոջից պահանջում եք տղամարդին հավասար ուժ» (Շիրվ., 2, 199)։

«Նիհար տղա էր, դեղնավուն, հիվանդոտ դեմքով և խոհուն, իր տարիքին անհամապատասխան լուրջ հայացքով» (Ն. Դ., 2, 551)։ «Ամեն տեղի, ամեն դեպքի, ամեն ժամանակի հարմար խաղեր ունեին» (Ղ. Ագ., 202)։

Այս ածականները ևս կարող են կապակցվել կապ ունեցող լրացումների հետ, և այս դեպքում բառակապակցությունը կարտահայտի նույն կամ տարբեր հարաբերություն։ Այսպես, հարմար, անհարմար ածականները կարող են ունենալ համար կապով լրացում (ինձ համար, մեկի համար անհարմար և այլն), օրինակ. «Գիշերը միշտ հարմար է գորքերի տեղաշարժի համար» (Հ. Ք., Մ. Տ. Զ., 2, 141, 1959)։

Ներդաշնակ, համաչափ, անհամապատասխան ածականները կարող են լրացում ունենալ հետ կապով (մի բանի հետ ներդաշնակ, մեծերի հետ համաչափ և այլն)։ Այս ածականները կարող են կապակցվել նաև այլ հոլովով դրված գոյականի կամ դերանվան հետ։ Հարմար ածականը ունենում է նաև բացառականով լրացում։

Արժան, արժանի, արժանավոր, անարժան, վայել, վայելուչ, անվայել, սազական, անսազ և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են արժանավորության, վայելչության հարաբերություն, ինչպես օրինակ՝ «Անշուշտ, Սեպան էլ գործել է այս պատժին արժանի մի հանցանք» (Մուր., 3, 113)։

«Եվ գայրացած քարտուղարի բերանից ակամա դուրս թռան ինտելիգենտ մարդուն անվայել մի քանի հայհոյական խոսքեր» (Ն. Դ., 1, 187)։

Նույն հարաբերություններ կարող է արտահայտվել նաև այդ ածականներով և կապի հետ գործածված լրացումով կազմված կապակցություններում։ Օրինակ՝

«Այս փուչ աշխարհում, քար-սրտերի մեջ,
Երդ իմ, ինձ համար վայել վայր չկա» (Ավ. Իս., 1, 167)։

«Նա ոչ բնդունակ է, ոչ էլ արժանի այդ գործի համար» (Հ. Ք., Մ. Տ. Զ., 1, 333)։

Կարոտ, ծարավ, ծարավի, պապակ և այլ ածականներով կազմված բառակապակցություններն արտահայտում են ձգտման, ուղղվածության հարաբերություն։ Այսպիսի կապակցություններ կան հետևյալ նախադասություններում.

«Չէ, ասացին, արևի ծարավ
Հսկաներն են իրար գարկում» (Հ. Թ., 2, 126)։

«Մուրակի կարոտ չէին նրանք» (Ր., 4, 94)։

Ադելի, լսելի, անհասկանալի. համակրելի, սիրելի. ցանկալի և այլ ածականներով կազմված բառակապակցություններն արտահայտում են ենթակայական հարաբերություններ, ինչպես օրինակ՝ «Այդ միջոցին նրանք սկսեցին խոսել ինձ բոլորովին անհասկանալի մի լեզվով» (Ր., 4, 288)։ «Խոսում էին ինձ անլսելի ձայնով» (Ն. տ., 303)։ «Երևում է, որ ներս մտնողը բոլորին էլ սիրելի անձնավորություն էր» (Մուր., 3, 22)։ «Մենք կքաշենք մեր կողմը մեզ համակիր նախարարներին» (Ռ. Ռ., Վարդ., 72)։

Այս վերջին նախադասության մեջ մեզ համակիր կապակցությունը կարելի է հասկանալ երկու իմաստով. մի դեպքում ենթակայական իմաստով (որոնց մենք համակրում ենք), երկրորդ դեպքում՝ հանդման իմաստով (որոնք համակրում են մեզ)։

Նկատելի է, սակայն, որ վերջին շրջանում ենթակայական հարաբերությունն սկսում է ըմբռնվել իբրև հանդման-նպատակային հարաբերություն, և այդ պատճառով համապատասխան ածականը լրացում է ստանում համար կապով։ Այսպես, ինձ հասկանալի. մեզ զզալի և այլ կապակցություններ արդեն քիչ են գործածվում, դրանց փոխարեն կազմվում են ինձ համար հասկանալի, մեզ համար զզալի և այլն, որոնք ավելի որոշակի են ընդգծում նպատակային-հանդման հարաբերություններ։

Պատրաստ, անպատրաստ, պիտանի, անպիտան և այլ ածականներով կազմված բառակապակցություններն արտահայտում են նպատակի հարաբերություն, օրինակ. «Քրոջական սիրազեղ մի ջերմություն կար այդ հայացքում, անձնազոհության պատրաստ մի հոգի» (Դ. Դ., Վարդ., 492)։

Նպատակի հարաբերությունը կարող է արտահայտվել նաև այդ ածականներով ու համար կապով հանդես եկող լրացումով, օրինակ՝

Որպիսի դժվար ջանքերով է մարդ
Կռում իր ոգին, որ նա կարծրանա,
Կոփվի—և ապա պիտանի դառնա
Այս դժվար, այս բարդ պայքարի համար (Ե. Ջ., 11, 1954)։

Հնազանդ, հլու, հավատարիմ և այլ ածականներով կազմվող բառակապակցություններն արտահայտում են հնազանդության հարաբերություն, օրինակ.

«Վարդանն իր մոտ կանչեց ուիտին հավատարիմ նախարարներին» (Դ. Դ., Վարդ., 253)

Հավատարիմ ածականը կարող է լրացում ստանալ նաև նկատմամբ կապի միջոցով՝ մեկի նկատմամբ հավատարիմ և այլն։

Ուրախ ածականով կապակցությունն արտահայտում է շահի, օգտի հարաբերություն։ «Հակառակորդներն ուրախ էին այդ անկարգությանը» (Շիրվ., 2, 367)։

Ուրախ ածականը լրացում է ստանում նաև համար կապի միջոցով (հաջողության համար ուրախ, երջանկության համար ուրախ և այլն)։

Ռնոռոշ, հատուկ ածականներով կազմված բառակապակցություններն արտահայտում են պատկանելության հարաբերություն։ Այսպիսի կապակցություններ կան հետևյալ նախադասություններում.

«Տիկինը միայն կանանց հատուկ նուրբ բնազդով զգաց նրա շփոթության հիմնական պատճառը» (Շիրվ., 2, 316)։

«Սիրային նամակներ էին գրում միմյանց անկեղծ խոսքերով և իրենց հասակին բնորոշ պարզունակ փիլիսոփայությամբ լի» (Հ. Ք., Մ. Տ. Ջ., 1, 329)։

Ընդունակ, անընդունակ և նման ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են սահմանափակման հարաբերություն, օրինակ.

«Մեծ եղբայրը հաշմված, գործին անընդունակ էր դարձել» (Վրթ. Փափ., 3, 297)։

Սահմանափակման հարաբերություններ կարող է արտահայտվել նաև մեջ կապով ու սեռականով՝ դրված ածականի մոտ. այս գործի մեջ ընդունակ, ուսման մեջ անընդունակ: Երբեմն մեջ կապի փոխարեն կարող է հանդես գալ համար կապը։

Քննարկվող ածականները ծագման տեսակետից միատարր չեն. դրանց մեջ կան և՛ բուն ածականներ (պարզ և բաղադրյալ), և՛ դրարարյան դերբայական ձևերի քարացմամբ առաջացած ածականներ, և՛ բայարմատին զուգահեռ գործածվող ածականներ։ Սակայն տարբեր ծագման ու կազմության ածականները նույն հատկությունն ունեն լրացում ստանալու դեպքում, և բոլորն էլ տրական հոլովով լրացում են պահանջում։ Ուսումնասիրություններ ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում ածականի լրացումը պայմանավորված է նրա շարահյուսական կիրառությամբ, իսկ շատ դեպքերում էլ ածականի շարահյուսական դերը նշանակություն չունի լրացում ստանալու հարցում։ Բերված բոլոր ածականները տրական հոլովով դրված գոյական կամ դերանուն լրացում են ունենում որպես ստորոգելիական վերադիր, երբեմն էլ պարագա գործածվելու դեպքում։ Մինչդեռ որոշիչ կիրառության դեպքում ոչ բոլոր ածականներն են տրականով լրացում ունենում։

Այսպես, արժանի, անարժան, ծարավ, հատուկ, հավատարիմ, ծանոթ, անծանոթ, սովոր, պիտանի, անպիտան, հայտնի, անհայտ, ձեռնտու, սազական, պարտական, տեղյակ, անտեղյակ, հմուտ, հարկավոր, անրնտել, ատելի, սիրելի, զանկալի, լսելի, զգալի, անզգալի, կից և այլ ածականներ տրականով լրացում ունենում են ստորոգելիական վերադիր և որոշիչ կիրառության դեպքում։ Բերենք այդպիսի կապակցությունները ածականի ստորոգելիական վերադիր ֆունկցիայի դեպքում.

«Թագուհին, որ սովոր էր ազմկալից կյանքի, արդեն հոգնել էր երկար մենակությունից» (Մուր., 3, 386)։ «Ինձ տակավին հայտնի չէր, թե ուր էինք գնում» (Բ., 4, 271)։ «Ես կասեմ, որ դուք ամենքդ ինձ արհեստակից եք» (Ղ. Ագ., 125)։

«Ոտար վայրում նա մեռավ տենչավառ,
Հայրենի հողին չեղավ արժանի» (Ավ. Իս., 2, 199)։

Նույն ածականներով կազմված բառակապակցությունները ավելի շատ հանդես են գալիս ածականի որոշիչ կիրառության դեպքում։ Օրինակներ. «Այս միտքը շղթայում էր ապահով ապրուստի սովոր տիկնոջը» (Շիրվ., 2, 468)։

«Անծանոթը վանական մրնոլորտին անրնտել մի ունձնավորություն էր» (Մուր., 3, 297)։

«Քաշվեցի սենյակս, որը տանտիրոջս բնակարանին կից ամենավերջին սենյակն էր» (Ն. Դ., 2, 551)։ «Երեկոյան դեմ նա գնաց իրեն լավ ծանոթ մի կապալառուի մոտ» (Ն. Դ., 1, 35)։

Վայել, անվայել, ծարավ, հավասար, համաձայն, խառն, մոտ, համեմատ, հարմար, անհարմար, ներդաշնակ, համաչափ, անհամաչափ, պատրաստ, անպատրաստ, հակառակ, անտարբեր, կարևոր և այլ ածականներով կապակցությունները կարող են կազմվել ածականի բոլոր ֆունկցիաների դեպքում։ Այսպես օրինակ, այդ կապակցությունները հանդես են գալիս ածականի՝ որպես ստորոգելիական վերադիր, պարագա, որոշիչ կիրառության դեպքերում. բերենք մեկական օրինակ.

«Կրոնավորին վայել չէ այդ աստիճան պճնասիրություն» (Բ., 5, 87)։
«Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստն էլ փոխեցին» (Հ. Թ., 1, 411)։
«Նա իր հասակին անհարմար արագ շարժումներով շտապում էր» (Դ. Դ., Վարդ., 74)։

ԴՈՅԱԿԱՆ ԵՎ ԴԵՐԱՆՈՒՆ ԼՐԱՑՈՒՄԸ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԵՎ

Բացառական հոլովով լրացում ունեցող ածականների կապակցությունները լինում են երկու տեսակ։ Մի դեպքում ածականի լրացումը համեմատության խնդիրն է, այն առարկան, որի համեմատությամբ բարձր է տվյալ ածականով արտահայտվող հատկանիշը։ Այսպիսի բառակապակցություններ կարող են կազմվել որակական բոլոր այն ածականներով, որոնք համեմատության աստիճան են ունենում։ Այսպիսի բառակապակցությունները կարող են լինել ածականի ամեն մի կիրառության դեպքում։ Օրինակ, նման կապակցություններ են կազմվում ածականների որպես ստորոգելիական վերադիր կիրառության դեպքում։

«Ինձ անհարմար դտան իրանց ընկերությանը, որովհետև ես նրանցից հասակով շատ փոքր էի և բոլորովին անփորձ» (Բ., 4, 275)։ «Նրա արիներ կարմի՞ր է մերից» (Հ. Թ., 2, 42)։

Նույն կապակցությունները պարագայի դերով են գործածված հետևյալ նախադասություններում.

«Սառաները սովորականից լավ էին զարդարված» (Ր., 7, 87)։ «Ու նորից հնչեցին լարերն առաջվանից ավելի փաղաքուշ ու դյուրիչ» (Ն. Դ., 1, 122)։

Այդ կապակցությունները ավելի շատ գործածվում են որպես որոշիչ։

«Բայց ով կտա մեզ ամսական տասը ռուբլով սրանից ավելի հարմար բնակարան» (Շիրվ., 2, 105)։ «Ներս մտավ միջին հասակից փիշ ցածր, կլորիկ դեմքով, երկայնաձև քթով, մաքուր սափրած այտերով մի երիտասարդ» (Շիրվ., 2, 254)։ «Իր արտաքինով կարող էր հրապուրել բարեկամիցս շատ ավելի նուրբ ճաշակ ունեցող մարդկանց» (Ն. Դ., 2, 434)։

Համեմատության աստիճան կազմող բառակապակցությունների մեջ առանձին տեղ ունեն դերադրության բացառականով կազմված կապակցությունները։ Այս դեպքում համեմատության խնդիրը գոյականաբար գործածված ածական է լինում։ Այսպես, լինում են՝ բաջերից բաջ, անհաղթներից անհաղթ, հզորներից հզոր, գեղեցիկներից գեղեցիկ, մեծերից մեծ, խելոքներից խելոք։

Բացառական հոլովով այլ կարգի լրացում ունենում են սակավաթիվ այնպիսի ածականներ, որոնք կամ բայական ծագում ունեն, կամ զուգահեռ են համապատասխան բայարմատին, ուրեմն բացառական հոլովով դրված լրացում ածականն ստանում է բայական հատկանիշ ունենալու շնորհիվ։ Այդ ավելի պարզ կդառնա, եթե համեմատենք համապատասխան բայը և նրա արմատին զուգահեռ ածականը՝ խնդրառության տեսակետից։ Այսպես, զրկել բայը և զուրկ ածականը (որը զրկել բայի արմատին զուգահեռ է) ունենում են հավասարապես բացառական հոլովով դրված լրացում։ Օրինակներ՝

«Մեր հին աղարից ընկել ենք, զրկվել,
Նորն էլ չգիտենք թե ինչ է եկել» (Հ. Թ., 2, 38)։

«Մենք ունենք Կ. Պոլսում մի քանի տգետ և ամեն կրթությունից զուրկ «զեզեկներ» միայն, որոնք ուրիշ ոչինչ չեն, եթե ոչ շաղակրատ տիրացուներ» (Ր., 4, 491)։

Բացառական հոլովով գոյական կամ դերանուն լրացում են ունենում ազատ, զուրկ, անջատ, զաղտնի, զերծ, պակաս, ապահով, սակավախոս, խելազար, վաստակաբեկ, աճաբեկ, անսպասելի, անտեղյակ, բափուր, անկախ և այլ ածականներ։

Այս ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են տարբեր հարաբերություններ՝ անջատման, պատճառի, սահմանափակման, վերաբերության և այլն։

Այսպես՝ ազատ, զուրկ, անջատ, զերծ, բափուր, անկախ և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են անջատման հարաբերություն։ Օրինակներ՝ «Նա փալաս էր, կամքից, անհատականության, ազատասիրության զգացումից զուրկ մի արարած» (Ն. Դ., 2, 600)։

«Նա զորքն առաջ էր վարել այնպիսի ճանապարհներով և այնքան միմյանցից անջատ խմբերով, որ հագարացի պահնորդները չէին կարող նրանց նշմարել» (Մուր., 3, 422)։

Խելազար, խելաւ, զունատ, վաստակաբեկ, ահաբեկ և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են պատճառի հարաբերություն։ Օրինակներ՝

«Գրբաց Գրիգորը դդակը քաշեց աչքերին և, ամոթից ու անզոր կատաղությունից զունատ, կանանց ծաղրական ժպիտների տակ դիմեց դեպի դուռը» (Ն. Դ., 1, 25)։

«Կարծես ծանր աշխատությունից վաստակաբեկ նա յուր աչքերը դարձրեց դեպի Սեղան հոդնած ձևով» (Մուր., 3, 40)։

Ապահով, պակաս, զեղեցիկ, տգեղ, ուժեղ, աղքատ և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են սահմանափակման հարաբերություն։ Օրինակներ՝

«Կապտագույն շալվարը, վերևից բավական լայն, իսկ հետզհետե սաստիկ նեղանալով, իջնում էր մինչև նրա ծնկները» (Ր., 5, 98)։

«Շահենն ուժեղ էր մաթեմատիկայից, Արամը՝ գրականությունից (Ն. Զ., Պ. Պ., 108)։

Անտեղյակ, տեղյակ, գիտակ և այլ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են վերաբերության հարաբերություն. օրինակ՝ «Նրանք իրարից անտեղյակ, իրար կարծելով միևնույն տերերի կողմից ուղարկված՝ ճամբարից հեռանում և կորչում էին զանազան ուղղությամբ» (Դ. Ռ., Վարդ., 345)։

Վերաբերության հարաբերությունը կարող է արտահայտվել նաև տրականով կազմված կապակցություններում։ Օրինակ՝

«Եվ իմաստ չուներ ճամփան անհեթեթ,
Եվ անցնում էինք անկումին գիտակ» (Ե. Չ., 235)։

Աջ, ձախ ածականներով կազմված կապակցություններն արտահայտում են տարածական հարաբերություն։ Օրինակ

«Սիսիանի մի մասը՝ Որոտան գետից ձախ, տիրում էին Ֆրանդուլովները» (Բակունց, 307)։

Այս կապակցությունները կարող են հանդես գալ ածականի տարբեր՝ իբրև ստորոգելիական վերադիր, պարագա, որոշիչ կիրառությունների դեպքում։ Դրանց համապատասխան օրինակներն են՝

«Այդ պատճառով Հասոն միշտ գոհ էր Նրանից» (Բ., 4, 361)։

«Նրա օրինակից խրախուսս առան և այն իշխանները, որոնք հաղարացոց սրից ահարեկ. իրանց փրկությունը միայն բերդերի մեջ էին որոնում» (Սուր., 3, 58)։

«Մեռած չորանի պառավ նանն է նա՝
Ցավից խելագար բառաչում, լալիս» (Հ. Թ., 2, 65)։

«Բնականից բուն դեմքը ավելի մռայլ գույն էր ստացել» (Բ., 7, 27)։

ԴՈՅԱԿԱՆ ԿԱՄ ԴԵՐԱՆՈՒՆ ԼՐԱՑՈՒՄԸ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Գործիական հոլովով դրված լրացում են ունենում սակավաթիվ ածականներ։ Այդպիսի լրացմամբ բառակապակցությունները բաժանվում են երկու խմբի։

Առաջին խումբը արտահայտում է սահմանափակման հարաբերություն։ Այսպիսի կապակցություններ կարող են կազմել համեմատաբար մեծ թվով ածականներ՝ անկախ կազմությունից և բայի հետ ունեցած փոխհարաբերությունից։ Այդպիսին են մեծ, հզոր, ուժեղ, գեղեցիկ, հպարտ, բարձր, երկար, կարճ, զրավիչ, այլանդակ, հրապուրիչ և այլ ածականներ։ Այս կապակցությունները կարող են հանդես գալ ածականի տարբեր կիրառության դեպքում։ Հետևյալ նախադասություններում այդպիսի լրացում ունեցող ածականը ստորոգելիական վերադիր է.

«Թեպետ տարիքով ավելի փոքր էր քան թագավորը, բայց նրանից ավելի խոհեմ և շրջահայաց էր» (Մուր., 3, 373)։ «Մայրիկ, հիվանդ եմ երկնքի ցավով» (Ավ. Իս., 1, 76)։

«Սրտով խաղաղ եմ ես հիմա
Ու խոհերով հստակ, մաքուր» (Ե. Չ., 112)։

Նույն կապակցությունները կան նաև ածականի պարագա գործածության ժամանակ։

«Հիմա որ նրանք չկան՝ մենակ եմ տեսնում ինձ ու մտքով տկար» (Դ. Դ., Վարդ., 627)։

«Կարող ես դու՝ երդիր նրան՝
Իր հույզերով մեծ ու մանրիկ» (Ե. Չ., 116)։

Այդպիսի կապակցություններ կան նաև ածականի որոշիչ լինելու դեպքում։

«Թողնելով դպրոցը, այնուհետև Կարոն վարում էր լի փորձանքներով թափառական կյանք» (Բ., 4, 286)։ «Տխուր կղզին և նրա բնակիչները հետզհետե իրանց ազդեցությունն արին հոգվով ու մարմնով վիրավոր արքայի վրա» (Մուր., 3, 385)։

Սահմանափակման հարաբերությունն արտահայտվում է նաև ածականի՝ մեջ կապի հետ դրված լրացում կապակցություններով։ Օրինակներ՝ «Դա ամուր կազմվածքով, զեմքի խոշոր գծերով լոռեցի Մարուքյանն էր, թվարանության մեջ ամենից ընդունակ աշակերտը» (Շիրվ., 2, 416)։

«Այդ կինը Սեղան էր, թագուհու գորովագութ դայակը, դղյակում եղող կանանց մեջ ամենից բարին և ազնվասիրտը» (Մուր., 3, 11)։

Երկրորդ խումբը կազմում են խնդրային հարաբերություն արտահայտող կապակցությունները, որտեղ ածականը իմաստային ամբողջության պահանջով լրացում է ունենում։ Այդպիսի կապակցություններ կարող են ստացվել լի (լիքը, լցուն), հղի, կաղ, անտեսանելի, տեսանելի, տարբեր և այլ ածականներով։ Սրանք կարող են հանդես գալ ածականի տարբեր կիրառությունների դեպքում։ Այսպես, այս կապակցությունները հանդես են գալիս ածականի ստորոգելիական վերադիր կիրառության դեպքում։

«Իմ դայրույթը լիքն է սիրով.
Իմ դիշերը՝ լիքն աստղերով» (Հ. Թ., 1, 149)։

«Նա տեսավ, որ ամբարը լիքն է ցորենով» (Ղ. Ադ., 267)։
Նույն կապակցությունները կան ածականի պարագա կիրառության ժամանակ։

«Նոր սիրով լեցուն դարձա ես ձեզ մոտ
Ու նոր երգեր են հնչում իմ հոգում» (Վ. Տ., 205, 1956)։

«Եվ հայ պատանին, լի ախտարորբոք կրքերով լուսնկա դիշերներին թափառում էր լճի ափերմոտ «հրեղեն աղջիկներ» որսալու համար» (Ր., 4, 390)։

Նույն կապակցություններն առկա են նաև ածականի որոշիչ լինելու դեպքում։

«Սիրտը զառնությամբ լի երիտասարդը մերթ համոզում էր, մերթ խնդրում» (Շիրվ., 4, 113)։ «Վարդանը լսում էր սարսափներով հղի այդ խոսքերը» (Դ. Դ., Վարդ., 573)։

«Խառնվածքով տարբեր մարդիկ լինելով, Իվան Լյաշկոն ու Յակով Կացնելսոնը մտերիմներ էին» (Հ. Ք., Մ. Տ. Զ., 1, 513)։

Ածականը քիչ դեպքերում է ունենում ներգոյական հոլովով դրված լրացում։ Բայական ծաղում ունեցող և մի շարք այլ ածականներ կարող են ունենալ այդպիսի լրացում. օրինակ՝ «Սրահից լսվում էր դինով նախարարների քրքիջն ու երգը։ Գործերում կիսատ, անվճռական, հարափոփոխ, փափկամորթ մարդիկ, որ չգիտեն, թե ինչ պիտի անել, երբ դալիս է արհավիրքը» (Դ. Դ., Վարդ., 561)։

«Ով չի տեսել պատերազմի սոսկին տարվա նահանջը, նա հազիվ թե ամբողջ խորությամբ զգա այն մեծ, մարդկային հոգում անպարփակելի ցավը, որ ապրում էր ամեն զինվոր» (Հ. Ք., Մ. Տ. Զ., 1, 74)։

ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ

Արդի հայերենում սովորաբար ածականը հայցական հոլովով դրված լրացում չի ունենում։ Սակայն պատահում է երբեմն, որ բայական ծաղում ունեցող որոշ ածականներ ստանում են այդպիսի լրացում։ Իրականում այդ կապակցությունները պետք է դերբայական դարձված համարել, քանի որ լրացյալը դրարարյան ապառնի դերբայն է։ Այսպիսի կապակցություններից են, օրինակ, անհաղթ համարելի, բարեկամ կոչեցյալ և այլն։

«Այդ աչքերի մեջ նա զգում էր անհաղթ համարելի մի տեսակ ուժ, որ կոչվում է «կնոջ ուժ»» (Ն. Դ., 2, 22)։

ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԴՐՎԱԾ ԿԱՊԵՐԻ ՀԵՏ

Ժամանակակից հայերենի ածականները ավելի շատ լրացումներ են ունենում կապերի միջոցով։ Բառակապակցությունների այս տեսակն ավելի ու ավելի է զարդանում։ Կապերը ինչպես բայի, այնպես և ածականների լրացումները նրա հետ կապելու դերում հանդես գալով արտահայտում են զանազան վերաբերական իմաստներ, հետևաբար և ածականների այդպիսի բառակապակցություններն արտահայտում են տարբեր հարաբերություններ։

Ամենից առաջ պետք է տարբերակել ածականի կապով լրացում պարունակող բառակապակցությունների երկու տեսակները։ Պես, չափ, նման կապերով լրացում ունենալու դեպքում ածականը կազմում է ձևաբանական իմաստ արտահայտող կապակցություն, այն է՝ որակական ածականի հավասարական համեմատական աստիճան։ Այդ կապերի խնդիրները դրվում են տրական հոլովով։ Ածականի այս կապակցություններն արտահայտում են հավասարության, նմանության հարաբերություն։ Այս կապակցությունները կարող են գործածվել ածականի ինչպես ստորոգելիական վերադիր, այնպես էլ պարագա և որոշիչ կիրառությունների դեպքում։ Հետևյալ նախադասություններում ածականը ստորոգելիական վերադիր է.

«Տխուր էր և հայրս. մանվան չափ տխուր էր նա» (Ր., 4, 228)։

«Այդ դիծն այն էր, որ նա ցինիկի պես անկեղծ էր, լրի պես համառձակ և երեխայի պես անփույթ» (Ն. Դ., 2, 465)։

Նույն կապակցությունները պարագա են հետևյալ նախադասություններում։

«Խեղճ մարդը մեռելի պես գունաթափ դողում էր» (Վրթ. Փ., 2, 441)։

«Խմբագիրը, ընդհակառակն, սովորականի նման աշխույժ ու տենդոտ, կատարում էր իր առօրյա աշխատանքը» (Ն. Դ., 1, 205)։

Այս կապակցությունները կատարում են նաև որոշիչի դեր հետևյալ նախադասություններում. «Ստեփանը ինձ նման շատ և անհանգիստ տղա էր» (Բ., 4, 262)։

«Նրանց միջից առաջ եկավ մի զորական, կարճահասակ ու կոնդի նման հաստատուն» (Դ. Դ., Վարդ., 287)։ «Նրանք գալիս էին բարձրավանդակի տափարակից, որի մեջտեղը աղամանդի նման՝ ջինջ լիճն էր» (Բակունց, 207)։

Բացի հավասարական համեմատական իմաստ ունեցող կապակցություններից, ածականը կապերի միջոցով ստանում է նաև այլ իմաստ արտահայտող լրացումներ, դրանց հետ արտահայտելով տարբեր հարաբերություն՝ վերաբերության, հանգման, նպատակի և այլն։ Կապի խնդիրները դրվում են սեռական, տրական, հայցական, երբեմն էլ բացառական հոլովներով։ Սակայն ամենից հաճախ գործածական են սեռականն ու հայցականը։ Ածականը լրացում կարող է ունենալ համար, նկատմամբ, դեպի, առանց, հետ և այլ կապերով։ Օրինակներ՝

«Կարոյին ես ճանաչում էի այն ժամանակ, երբ նա մի լուռ, մտախոհ, միևնույն ժամանակ դեպի ամեն վատություն ոխերիմ պատանի էր» (Բ., 4, 409)։

«Երկու սպաներն ապրում էին միասին, բայց չափազանց օտար միմյանց համար» (Ս. Բաղդ., Ծարավների աշխարհում, 48)։ «Չէր իմանում, ինչպես վերջ տա այդ իրեն համար անախորժ տեսարանին» (Ն. Դ., 1, 258)։ «Այս պատճառով մի գաղտնի և, մինչև այն իրան անծանոթ, կասկած պաշարեց յուր սիրտը» (Մուր., 3, 137)։

Այս կապակցությունները ևս կարող են կազմվել ածականի տարբեր կիրառությունների դեպքում։ Այսպես, նման կապակցություններ կան ածականի ստորոգելիական վերադիր պաշտոնի դեպքում։

«Ձեռքերի բազուկները մինչև արմունկը մերկ էին» (Բ., 5, 41)։

«Աղջկայանի համար անսպասելի ու զարմանալի էին գեներալի այդ խոսքերը» (Հ. Ք., Մ. Տ. Ջ., 1, 92)։

Նույն կապակցությունները հանդես են գալիս նաև ածականի պարագա կիրառության դեպքում, օրինակ՝ «Առաջին անգամն էր նա տեսնում Մսերյանին այդքան ուշադիր դեպի մի կին» (Շիրվ., 2, 386)։

Այդ կապակցությունները հանդես են գալիս նաև ածականի որոշիչ կիրառության ժամանակ։

«Այն հոդվածը ով որ էլ գրած լինի, իմ կարծիքով, յուր մեջ ինձ համար վիրավորական բան չի պարունակում» (Շիրվ., 2, 311)։

«Միանգամայն պատահական կերպով գտա բուն արմատը մի պատմվածքի ընթերցումից հետո, որը հանկարծ լուսավորեց իմ մինչ այդ մութ ներքին աշխարհը» (Ն. Դ., 1, 119)։

ՄԱԿԲԱՅՆ ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄ

Ժամանակակից հայերենում ածականն ստանում է աստիճանի և չափի, ժամանակի, ձևի մակբայներով և մակբայական իմաստ ունեցող կապակցություններով արտահայտված լրացումներ։ Մակբայները ածականի լրացում են դառնում՝ արտահայտելով զանազան հարաբերություններ։ Մակբայ լրացումով կապակցությունները լինում են երկու տեսակ։ Առաջին խմբին պատկանում են չափի, աստիճանի մակբայներով (համապատասխանաբար նաև դերանուններով), ինչպես և աստիճանի մակբայի իմաստ ունեցող բառերով արտահայտված լրացում ունեցող այն բառակապակցությունները, որոնք արտահայտում են որակական ածականի համեմատության այս կամ այն աստիճանը (նվազական, առավելական համեմատական և բացարձակ գերադրական)։

Ածականի լրացում կարող են դառնալ ավելի, պակաս, առավել, խիստ, շատ, միշ, մի միշ, բավական, բավականին, չափազանց, փոքր ի շատն, սաստիկ, կրկնապատիկ, եռապատիկ, բազմապատիկ, փոքր-ինչ, վերին աստիճանի, մի տեսակ, միշ թե շատ, սակավ ինչ, այն աստիճան, ծայր աստիճան, չափից դուրս, ավելի քան մակբայները ու մակբայական կապակցությունները, ինչպես նաև մակբային փոխարինող այսքան, այնքան, նույնքան, այդքան, որքան, ոչ այնքան դերանունները։ Թվարկած մակբայները, մակբայական կապակցությունները ու դերանունները լրացում են դառնում տարբեր կազմություն ու ծագում ունեցող ածականների համար. դրանք կարող են դրվել ինչպես գրաբարյան դերբայական ձևերի քարացումից առաջացած (թախծալի, մատչելի, լսելի, նշմարելի, սոսկալի), բայարմատին զուգահեռ (զուրկ, տարբեր, մերկ, հարմար, ախորժ), կամ կազմությամբ բարդ՝ երկրորդ բաղադրիչը բայարմատ ածական-

ների (արագաշարժ, երախտագետ, խանդավառ, ծանրախոհ, խաղաղասեր, շատախոս, հայրենասեր և այլն), այլև պարզ ու ածանցավոր կազմություն ունեցող ածականների վրա (տխուր, խոժոռ, բարձր, ջերմ, նոր, ծույլ, վայելուչ, անճպաստ, պատրաստի և այլն)։ Այս ածականներով կազմվում են բազմաթիվ կապակցություններ։

Մակբայներն ածականի հետ կապակցվում են վերջինիս տարբեր կիրառության դեպքում։ Այսպես, հետևյալ նախադասություններում չափի, աստիճանի մակբայները կապակցվել են ստորոգելիական վերադիր գործածված ածականների հետ։

«Մահն շատ հավատարիմ էր» (Բ., 4, 369)։ «Անկեղծ սրտով հարձակվեցան թշնամու դեմ, որ կրկնապատիկ զորավոր էր իրանցից» (Մուր., 3, 272)։

Այսպիսի կապակցություններ կան նաև ածականի պարագա կիրառության դեպքում։

«Ես իմ մտքում խիստ ղժգոհ մնացի Կարոյից» (Բ., 4, 272)։ «Նա իրեն չափից դուրս ուրախ և երջանիկ էր զգում» (Ն. Դ., 2, 254)։

Ավելի շատ են գործածվում այս կապակցությունները որոշչի պաշտոնով։

«Այդ հասակում նա խիստ հաջողակ ձեռք ուներ» (Բ., 7, 59)։ «Այստեղ վիճակված էր նրան մի ուրիշ, ոչ պակաս կարևոր, նորություն ևս իմանալ» (Շիրվ., 2, 215)։ «Գրավում էր, ամենից առաջ, նրա մշտածիծաղ, վերին աստիճանի համակրելի դեմքը» (Ն. Դ., 2, 552)։

Համեմատության աստիճանի հարաբերությունն արտահայտվում է նաև չափ ու քանակի, աստիճանի ընդհանուր իմաստ ունեցող ցուցական և հարցական-հարաբերական դերանունների և ածականների բառակապակցության միջոցով։ Այստեղ դերանունը պարզապես փոխարինում է մակբային կամ մակբայական կապակցությանը։ Այս կապակցությունները լինում են երկու կարգի. մի դեպքում այդ դերանունները դրվելով ածականի վրա՝ նշում են հատկանշի աստիճանը ձևականորեն, իսկ հատկանշի աստիճանը իրականում արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Ածականի հատկանշի աստիճանը ձևականորեն նշում են այնքան, նույնքան, այնչափ, նույնչափ ցուցական դերանունները։ Քննարկվող կապակցությունները կարող են հանդես դալ ածականի տարբեր կիրառության դեպքում։ Հետևյալ նախադասություններում այդպիսի լրացում ունեցող ածականը ստորոգելիական վերադիր է։

«Բայց նրանք այնքան աղքատ չէին, որ չկարողանային օգնել մեզ» (Բ., 4, 238)։

«Նրա մուտքն այնքան փառավոր և բազմամարդ էր, որ նմանում էր հաղթական մի դարձի» (Մուր. 3, 394)։

Այսպիսի կապակցություններ կան նաև հետևյալ նախադասություններում, որտեղ ածականը պարագա է։

«Վարազվաղանը պատմեց Անգղի և Արտաշատի դեպքերը այնքան գունավոր, ինչքան հնար էր տալիս իր երևակայությունը» (Ն. Դ., Վարդ., 483)։

«Մարդ չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում» (Բակունց, 3)։

Այս կապակցությունները կազմվում են նաև ածականի որոշիչ կիրառության դեպքում, օրինակ՝ «Իմ առջև բացվում էր մի նոր տեսարան, այնքան հիանալի, այնքան հափշտակիչ, որպես մի գեղեցիկ պատկեր իր հրաշալի արհեստագործությամբ» (Բ., 4, 325)։

Երբեմն չափի իմաստ ունեցող ցուցական դերանվան փոխարեն նույն դերով հանդես է գալիս ձևի իմաստ ունեցող ցուցական դերանուն։ Այս գործածությունը սակայն քիչ է տարածված։ Օրինակներ՝

«Պատերը և առաստաղը այնպես սև էին, որ դժվարանում էի որոշել, թե ինչով է ծեփված» (Վրթ. Փափ., 2, 265)։ «Ամենահամարձակ այծյամն այնպես բեթև, այնպես հանդուգն չէր կարող թռչել այն քարաժայռերի միջով, որպես Մարոն» (Բ., 4. 322—323)։

Բացի ձևական չափ արտահայտելուց, ցուցական և հարցական-հարաբերական մի շարք դերանուններ կարող են կապակցվել ածականի հետ ընդհանուր ձևով՝ հատկանշի չափ կամ աստիճան դրսևորելով։ Ածականների հետ կապակցվում են ինչքան, որքան, ինչ, այնքան, (ոչ այնքան), այսքան, այդքան, նույնքան, այնպես, նույնպես դերանունները։ Օրինակներ՝

«Ախ, որքան լավ բան է եղել աշխատությունը» (Բ., 4, 236)։ «Բագրատյանը բնակվում էր մի պառավ կնոջից վարձած մի ոչ այնքան ընդարձակ անշուք սենյակում» (Շիրվ., 2, 228)։ «Ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը» (Բակունց, 193)։

Ածականի լրացում կարող են դառնալ ոչ միայն չափ ու քանակի, աստիճանի, այլև ժամանակի և ձևի մակբայները։ Այսպես, ածականի հետ կապակցվում են միշտ, արդեն, տակավին,

այժմ, երբեմն, մերթ, դեռ, դեռևս, և այլ ժամանակի մակրայներ ու մակրայական կապակցություններ (միևնույն ժամանակ, նույն ժամանակ, այդ դեպքում, տվյալ դեպքում և այլն)։

Այսպիսի կապակցությունները հանդես են գալիս ածականի բոլոր կիրառությունների դեպքում։ Հետևյալ նախադասություններում, որտեղ կան այսպիսի կապակցություններ, ածականը ստորոգելիական վերադիր է ու պարագա։

«Ոտի վրա նա միշտ հիվանդ էր, բայց երբեք չէր պառկում» (Ր., 4, 232)։

«Բայց նա մնաց միշտ բարի դեպի ինձ և դեպի մեր ընտանիքը» (Ր., 4, 310)։

Ժամանակի մակրայով կազմված կապակցություններն ավելի շատ գործ են ածվում որպես որոշիչ։

«Լուսամուտի առջև երևում էին փողոցում տնկված ծառերի կատարների տակավին մերկ ճյուղերը» (Ն. Դ., 2, 260)։ «Ուր է նրա կյանքի այն շառուռակ բաղդը թմրություններ, որի մեջ նա իրեն այնքան անհոգ և երջանիկ էր զգում» (Ն. Դ., 2, 285)։ «Բոլորն ազդվեցին այս աղեղն խստաղաժան, հուսահատ վճռից» (Դ. Դ., Վարդ., 377)։ «Այստեղ-այնտեղ երևում էին մասրենու դեռ կանաչ թփերը» (Հ. Ք., Մ. Տ. Զ., 1, 76)։

Ածականի լրացում են դառնում երբեմն նաև ձևի և չափի մի շարք մակրայներ, ինչպես օրինակ՝ սովորաբար, անմիջապես, համեմատաբար, հազիվ, մասամբ, անհունորեն, բոլորովին, համակ, ամբողջովին, ֆիզիկապես, հոգեպես, խորապես, շեշտակի, ողղմապես, ի բեն, խստորեն և այլն։ Սրանցով կազմվող բառակապակցություններն արտահայտում են երկու կարգի հարաբերություններ։ Համեմատաբար, անհունորեն, հազիվ, մասամբ, բոլորովին, համակ, ամբողջովին, խորապես, խստորեն և այլ մակրայներով կազմվող կապակցությունները մոտավորապես արտահայտում են որակական ածականի համեմատության աստիճան։ Այդպես են՝ մասամբ սուտ, -ստույգ, հազիվ նկատելի, -ըմբռնելի, -նշմարելի, համեմատաբար թանկ, -արժեքավոր, -ունևոր, անհամեմատ բարձր, -գեղեցիկ, բոլորովին նոր, -մերկ, -առողջ, -հակառակ, -լուրջ, -զուրկ, -նման, -անմատչելի, -անբմբռնելի, -ազատ, -ուղիղ, -անվարժ և այլ կապակցություններ։

Երկրորդ դեպքում որոշ ձևի մակրայների և ածականի բառակապակցություններն արտահայտում են սահմանափակման հարաբերություն։

Ձևի մակրայներով կազմված կապակցությունները նույնպես գործ են ածվում ածականի տարբեր պաշտոնների դեպքում։ Այսպես, այդ կապակցությունները կան հետևյալ նախադասություններում, որտեղ ածականը ստորոգելիական վերադիր է և պարագա։

«Քեռուս տան այն մասը, ուր տեղավորեցին Մեղ, բոլորովին զուրկ էր ծառերից» (Ր., 4, 234)։ «Եվ որովհետև այժմ քեռիս ծառաները չուներ, խրճիթը մնացել էր բոլորովին անբնակ» (Ր., 4, 234)։

Այս կապակցություններն ավելի շատ գործ են ածվում ածականի որոշիչ կիրառության դեպքում։

«Այստեղ մի հազիվ նշմարելի շավիղ ոլոր-մոլոր գնում էր ձորի միջով» (Ր., 4, 420)։

«Սա մի ընդարձակ և բոլորշի սենյակ էր, համակ բարաշեն» (Մուր., 3, 18)։

«Իսկ այդ համեմատաբար թանկ ուտելիքները գնելու համար փող միշտ ուներ» (Ն. Դ., 1, 58—59)։ «—Թոքախտը վաղուց է, որ կրծում է նրա օրերը,—ասաց Աննան տխուր, խորապես մելամաղձոտ շեշտով» (Վրթ. Փափ., 2, 418)։

ԱԾԱԿԱՆ-ԱԾԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայտնի է, որ ածականը նախադասության մեջ կատարում է որոշիչի, պարագայի և ստորոգելիական վերադրի պաշտոն։ Դրանցից դուրս ածականի կիրառությունը պայմանավորված է նրա փոխանցմամբ գոյականի։ Սակայն կան բազմաթիվ դեպքեր, երբ ածականները կատարում են չափի, աստիճանի մակրայի դեր՝ նաև որակական ածականի համեմատության աստիճանը կազմելու դեպքում։ Մյուս կողմից, ածականը կարող է կապակցվել այլ ածականի հետ՝ հավասարազոր փոխհարաբերությամբ։ Այս դեպքում երկու ածականի կապակցությունը մոտենում է հարադիր բարդության։

Համեմատության աստիճան կազմելու համար լրացման դերում կարող են հանդես գալ որակական-աստիճանային երանգավորման իմաստ ունեցող մի շարք ածականներ, ինչպես՝ զարմանալի, անսովոր, արտասովոր, անսահման, անհեթեթ, անբնական, անսպասելի, աներևակայելի, առասպելական, ուրեշավոր, միատեսակ, միանման, միօրինակ, մշտական, ծայրահեղ, չարազու-

շակ, պարզ և այլն։ Հետևյալ նախադասություններում, որտեղ կան այսպիսի կապակցություններ, ածականը ստորոգելիական վերադիր է։

«Երիտասարդը արտակարգ բարեկազմ էր և գեղեցիկ» (Դ. Դ., Վարդ., 60)։

«Երկուսն էլ միօրինակ սուրբ են նրա համար» (Ր., 4, 375)։ «Բայց բոլորը միանման անխոս էին և անշարժ» (Մուր., 3, 288)։

Ածականի պարագա գործածության դեպքում ևս կարող են կազմվել այդպիսի կապակցություններ, օրինակներ՝ «Եվ ամենի հետ նա վարվում էր միատեսակ մեղմ, սիրալիր և զարմանալի ուշադրությամբ» (Շիրվ., 2, 154)։ «Նա խորտակվել էր անսպասելի դյուրին, աննախրնթաց հաջողությամբ» (Դ. Դ., Վարդ., 536)։

Այսպիսի կապակցություններն ավելի շատ են հանդիպում ածականի որոշիչ կիրառության դեպքում։

«Նա ստացել էր զարմանալի խոնարհ արտահայտություն» (Ն. Դ., 2, 88)։

«Շատերի աչքն էր ընկնում նա իբրև մի անսովոր շնորհալի երեխա» (Ղ. Աղ., 437)։

«Նա ապրում էր ծայրահեղ մեծ հուզումնալի վիճակ» (Դ. Դ., Վարդ., 377)։

Այս կապակցությունների մեջ ուրույն տեղ ունեն որակական և հարաբերական ածականի բառակապակցությունները։ Լրացման դերում հանդես է գալիս որակական ածականը, իսկ լրացյալի դերում՝ հարաբերականը։ Այդ կապակցությունների կազմությունը արտացոլում է լեզվի մեջ տարածված սղման երևույթը։ Որակական ածականը եղել է հարաբերական ածականի գոյական սկզբնաձևի որոշիչ, ապա և այդ ածականի լրացում։ Սկզբում եղել է, ասենք, սպիտակ թիբեղից (պատրաստված) տուփ, ապա դարձել է սպիտակ թիբեղյա։ Օրինակ՝ «Ծովափին սև բավիր, գլխարկով կին հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում» (Բակունց, 194)։

Այսպիսի ծագում ունեն նաև որակական երկու ածականների լրացական կապակցությունները, ինչպես են՝ սպիտակ երիզավոր, սև շրջանակավոր, բուխ միրուքավոր, պսպղան կոճակավոր և այլն։ Օրինակներ՝ «Վանյուշը, գիմնազիստի սպիտակ երիզավոր գլխարկը դեպի ծոծրակը ետ գցած, նստած էր ճաշասեղանի մոտ» (Ն. Դ., 1, 264)։ «Երբեմն դռները բացվում էին, ներս ու դուրս էին անում պսպղան կոճակավոր մարդիկ» (Բակունց, 139)։

ԱԾԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՈՒՆԵՆ՝ ԱՌԱՆՑ ՍՏՈՐՈԳՄԱՆ

Ժամանակակից հայերենի բառակապակցությունների մեջ յուրահատուկ տեղ են գրավում ածականի այն կապակցությունները, որոնցում ածականը ստորոգյալի տեսք ունի։ Դրանք շարահյուսական յուրահատուկ կապակցություններ են՝ դերբայական դարձված հիշեցնող կազմություններ։ Որ ածականի կապակցությունները դերբայական դարձվածին մոտ են, յուրահատուկ դարձված են, հեշտությամբ կարելի է տեսնել դերբայական դարձվածի և դրանց միասին գործածվելու դեպքերից։ Նախադասության մեջ այդ երկու կապակցությունները հաճախ նույն պաշտոնով իրար հետ են հանդես գալիս։ Օրինակ՝

Ու մարդասպանը դուրս ելավ ձորից,
Դեմքը այլայլված, մայլվածքը մոլոր (Հ. Թ., 2, 64)։

Առանձին վերցրած դրանք կարող են դիտվել իբրև նախադասություն՝ առանց ստորոգման, իբրև նախադասության կմախք, որը ստորոգմամբ վերածվում է նախադասության։ Այդտեղ, իսկապես ասած, դժվար է լրացում-լրացյալ կապակցություն փնտրել, այլ ավելի շուտ կա բաղադրիչների համաչափ կապակցություն ճիշտ այնպես, ինչպես նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև եղած կապն է։

Անհրաժեշտ է նշել, որ այս կարգի կապակցությունները սինտագմատիկ բնույթ ունեն և նախադասության մեջ համընկնում են նախադասության անդամ հասկացությանը։ Հետևաբար դրանք կատարում են նախադասության մեկ անդամի պաշտոն։

Դրանք ավելի շատ հանդես են գալիս որոշիչ կիրառությամբ։ Օրինակներ՝

«Նրա առաջ բացվում էին գեղեցիկ տեսարաններ՝ մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից հաճելի» (Մուր., 3, 361)։ «Հատակը ծաղկաչար գորգերի նուրբ մանրանկարները խտիտ էին բեբրում նայողի աչքերին» (Դ. Դ., Վարդ., 230)։

Կան նաև այդ կապակցությունների պարագա կիրառության մի շարք օրինակներ։
«Մխում էր աչքերը փակ և շրթունքները սեղմած շշի պոնկին» (Ն. Դ., 1, 52)։

Թռչում է միշտ իմ մտքում
Թեր արևում ու մոլոր (Հ. Թ., 1, 151)։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ր.—Բաֆֆի, Երկերի ժողովածու (10 հատորով), 1, 2, 3, 1955 թ., 4, 5, 6, 7, 1956 թ., 8, 1957 թ., 9, 1958 թ.։
2. Հ. Թ.—Հովհաննես Թումանյան, Երկեր (երկու հատորով), 1958 թ.։
3. ՄՈՒՐ.—Մուրացան, Երկերի ժողովածու (հինգ հատորով), հ. 3, 1952 թ.։
4. Ն. Դ.—Նար-Դոս, Երկերի ժողովածու (երեք հատորով), 1955 թ.։
5. ՇԻՐՎ.—Շիրվանզադե, Երկերի ժողովածու (տասը հատորով), հ. 1, 2, 1958 թ.։
6. Ղ. ԱՂ.—Ղազարոս Աղայան, Ընտիր երկեր, 1956 թ.։
7. ՎՐԹ. ՓԱՓ.—Վրթանես Փափազյան, Երկերի ժողովածու (հինգ հատորով), հ. 1, 2, 3, 1958 թ.։
8. ԱՎ. ԻՍ.—Ավետիք Իսահակյան, Երկեր (չորս հատորով), հ. 1, 2, 1958 թ., հ. 3, 1959 թ.։
9. Ե. Չ.—Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, 1954 թ.։
10. Դ. Դ. Վարդ.—Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, 1954 թ.։
11. Ա. ԲԱԿՈՒՆՑ—Ակսել Բակունց, Երկեր, 1955 թ.։
12. Ն. Զ. Պ. Պ.—Նաիրի Զարյան, Պարոն Պետրոսն ու իր նախարարները, 1958 թ.։
13. Հ. Ք. Մ. Տ. Զ.—Հրաչյա Քոչար, Մեծ տան դավակները, հ. 1, 2, 1959 թ.։
14. Ս. ԲԱՂԴ.—Ստեփան Բաղդասարյան, Ծարավների աշխարհում, 1959 թ.։
15. Վ. Տ. —Վահան Տերյան, Երկեր, 1956 թ.։

СЛОВОСОЧЕТАНИЯ ИМЕН ПРИЛАГАТЕЛЬНЫХ В СОВРЕМЕННОМ ЛИТЕРАТУРНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

В. А. КОСЯН

(Резюме)

В арменистике до сих пор почти не изучены имена прилагательные в плане их семантико-грамматических особенностей распространения при помощи разных частей речи. В статье рассматриваются словосочетания с именами прилагательными в роли главного члена в плане семантики и образования разных типов прилагательных и их связи с другими частями речи, а также в плане синтаксической роли главного члена словосочетания. Излагаются методика разработки материала, сочетания имен прилагательных с зависимыми словами — именами существительными в дательном, винительном, исходном, творительном, местном падежах, именами прилагательными и наречиями, а также словосочетаниями, зависимый член которых выражен с помощью предлогов.

Среди словосочетаний имен прилагательных особенно продуктивными являются словосочетания с зависимым членом — существительным в дательном и исходном падежах, а также с наречиями.

Затрагивается также вопрос о возникновении и путях развития разных типов словосочетаний.